Պտղաբուծություն առարկայի նշանակությունը, դասընթացի նպատակը: Պտղաբերության արդի խնդիրները և զարգացման ուղիները

Պտղաբուծությունը գյուղատնտեսության կարևոր և եկամտաբեր ճյուղերից մեկն է: Պտղատու են կոչվում գյուղատնտեսության մեջ մշակվող բազմամյա այն ծառատեսակներն ու հատապտղային բույսերը, որոնք տալիս են պտուղներ՝ թարմ և վերամշակված վիճակում օգտագործելու համար:

Պտղաբուծություն

Պտղաբուծությունը զբաղվում է պտղատու բազմամյա բույսի մշակումով, որը կազմակերպում է պտուղների և հատապտղայինների արտադրությունը:

Պտղաբուծությունը ուսումնասիրում է՝

1. պտղատու բույսերի և հատապտղայինների ցեղերի, տեսակների, սորտերի դասակարգում, կենսաբանական, արտադրական ու տնտեսական առանձնահատկությունենները:
2. Պտղատու բույսերի վրա ազդող գործոնները (լույս, ջերմություն, օդ, հող, բուսական և կենդանական միջավայր) և դրանց կարգավորում:
3. Ագրոտեխնիկական մի շարք միջոցառումների կիրառում՝ (էտ, ձևավորում, բուժում, ոռոգում, սնուցում, պարարտացում, այգու հողի պահպանման համակարգերի և խնամքի այլ աշխատանքների կիրառումը արտադրական և եկամտաբեր այգիներ հիմնելու համար):
4. Ուսումնասիրում է պտղատու ծառերի ու թփերի աճման պտղաբերման օրինաչափությունները և դրանց (աճն ու պտղաբերումն) կանոնավորող միջոցառումները:
5. Ուսումնասիրում է պտղատու բույսերի բազմամյա եղանակներն ու ձևերը: Տնկարանային տնտեսությունների կազմակերպումն ու գործարկումը: Տնկանյութի աճեցման տեխնոլոգիան:
6. Պտղատու այգիների նախագծումը, հիմնումը, շահագործումը
7. Պտղատու այգու բերքի խնամքի և բերքահավաքի կազմակերպում
8. Պտուղների հետբերքահավաքյան մշակությունը և պահպանումը
9. Պտղահատապտղային բույսերի աճեցման նոր տեխնոլոգիաների ստեղծման կիրառումը

Պտղաբուծություն

1. Առարկայի նպատակն է՝ ուսումնասիրել պտղահատապտղային բույսերի բուսաբանական և կենսաբանական առանձնահատկությունները, նրանց աճման ու պտղաբերման օրինաչափությունները, պտղատու տեսակների ու սորտերի դասակարգումը, նրանց արտադրա-տնտեսական նշանակությունները, շրջակա միջավայրի գործոնների ազդեցությունը պտղատու բույսերի վրա:
2. Ծանոթանալ վայրի պտղահատապտղայինների տեղական ձևերի բազմազանությանը, պահպանմանը և օգտագործմանն ու մշակովի դարձնելու հետ:
3. Ծանոթանալ պտղատու բույսերի բազմացմանն ու տնկանյութի աճեցմանը, տնկարկի կառուցվածքին ու գործունեությանը, պտղատու այգու հողատարածքի ընտրությանն ու գնահատմանը, պտղատեսակների և սորտերի ընտրությանը, հողի նախապատրաստմանը այգետնկման համար, այգեպաշտպան անտառաշերտերի հիմնմանը, սորտերի դասավորության կարգը այգում, այգու հողի մշակությունն ու ծառերի խնամքը, ոռոգումը, պարարտացումը, անցումները, բուժումները, ձևավորումը, էտը, բերքահավաքը և այլն:

Պտղաբուծության առարկան սերտորեն կապված է կենսաբանություն, կենսաքիմիա, ֆիզոլոգիա, գենետիկայի օրենքի հիման վրա, ինչպես նաև ագրոքիմիա և հողագիտություն, մելորացիա և օդերևութաբանություն, ագրոարտադրության կազմակերպում, ագրարային էկոնոմիկա առարկաների և լատիներենի իմացության վրա:

Պտղաբուծություն առարկայի կարևորությունը հիմնավորվում է պտղատու և հատապտղային այգիների աճեցմամբ, համապատասխան տնկանյութի աճեցման և տնկարկների հիման, ինչպես նաև անտառայգիների և կանաչազարդ այգետարածքների ստեղծման համար:

ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պտուղները, այդ թվում խաղողը, մրգերի կամ ընկույզների տեսքով մարդու հիմնական աղանդերային սննդամթերքներն են, նրանք օժտված են բարձր կալորիականությամբ և պարունակում են մի շարք արժեքավոր սննդային բաղադրիչներ: Խաղողը հանդիսանում է կոնյակագործության միակ, իսկ գինեգործության հիմնական հումք: Պտղատեսակների մեծամասնությունը պահածոյագործության և մասամբ գինեգործության կարևոր հումքն են: Սննդում օգտագործվում են նրանցից պատրաստված մի շարք կարևոր մթերքներ՝ հյութ և քաղցր պահածոներ՝ /շատերից՝ կոմպոտ, մուրաբա, ջեմ, պովիդլո և այլն/, մրգաչիր /խաղողի չամիչ, փյունիկ, թուզ, խուրմա, սալոր, ծիրան, դեղձ և այլն/, գինի, օղի և այլ ոգելից խմիչքներ /խաղողի, նուռի, խնձորի, սալորի, բալի, հատապտուղների, սերկևիլի, հոնի, փյունիկի, թուզի, թութի և այլն/, ձեթ և յուղ՝ /ձիթապտղի, յուղարմավի, ընկույզի, պիստակի/, թթու աղանդերք և քացախ /ձիթապտուղ, խնձոր, տանձ և այլն/, զովացնող-թարմացնող խմիչքներ /սուրճ, կոլա, կակաո/, համեմունք /հնդկընկույզ, մշկընկույզ, մեխակածառ, հիլ, վանիլ և այլ/: Շատ պտուղներ, այդ թվում խաղողը, բուժիչ հատկություններով դեղամիջոցներ են:

Պտղաբուծությունը համարվում է առավել եկամտաբեր գյուղատնտեսական ճյուղերից՝ շնորհիվ բազմայա բույսերի բնական դիմացկանության ու զորության, բարձր բերքատվության և սպառողի կողմից նրանց պտուղների բարձր գնահատականի, հետևաբար՝ բերքի բարձր ապրանքայնության ու առժեքի: Պտուղները, այդ թվում խաղողը, մշտական բարձր պահանջարկ ունեն համաշխահային շուկայում, ուստիև պտղաբուծությունը և խաղողագործությունը

կարևոր արտադրական նշանակություն ունեն և եկամտաբեր են երկրագնդի բոլոր երկրամասերում:

Բացի այդ, այգեգործական բազմամյա տնկարկները կարևոր բնապահպանական ու առողջարար դեր են խաղում մարդկության համար, իսկ պտուղատուներից շատերը, այդ թվում խաղողը, դիմացկուն տեսակներ են և ունակ են աճելու անբարենպաստ պայմաններում և ամրացնելու հողերը, որով էլ հնարավորություն են ստեղծում պայքարելու անապատացման դեմ:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Մշակաբույսերի մի մասն ունի սահմանափակ, տեղական ճանաչում, քանի որ տարբեր պատճառներով հարմար չեն այլ վայրերում մշակելու, իսկ հավաքած բերքը փոխադրելու համար: Ուստի և նրանց սպառումը մնում է խիստ սահմանափակ տեղական շուկաներում:

Իսկ որոշ պտուղներ փոխադրունակ են կաս էլ հեշտությամբ հարմարվում են աճեցման նոր պայմաններին: Այդպիսի պտղատուները ճանաչում են ստանում ամբողջ աշխարհում և համարվում են համաշխահային /համաերկրային, կոսմոպոլրտ/: Դրանք այդքան էլ շատ չեն ընդամենը չորս տասնյակ:

Համաշխարային առաջատարների առաջին տասնյակից յուրաքանչյուր մրգի տարեկան արտադրությունը կազմում է 25-ից մինչև 100 միլիոն տոննա է իսկ մյուսների համաշխարային տարեկան արտադրությունը գերազանցում է 3 մլն.տոննա:

Այպիսով, աշխարհի կարևորագույն պտղատու մշակաբույսերից առավել հայտնի, շատ արտադրվող ու սպառվող համաշխարային պղատուներն են /ոստ ՄԱԿ-ի Գյուղատնտեսության և Սննդի Համաշխարհային Կազմակերպության www/fao.org կայքի

Պտուղների, մրգերի և ընկույզների համաշխարային արտադրությունը, արդեն 60 տարվա ընթացքում, Համաշխարային Երկրորդ Պատերազմից հետո, տարեց տարի անընդհատ ավելանում է և 2005թ. հասել է 653,7 մլն.տոննայի :

Ակներև կարելի է նկատել, որ համշխարային լավագույն պտուղների, մրգերի և ընկույզների տեսականու միայն կեսն են աճում մեր երկրում :

ՀՀ ՊՏՂԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ

Պտղաբուծությունը Հայաստանի Հանրապետության ավանդական ու եկամտաբեր ճյուղերից է և արտադրական կարևոր նշանակություն ունի գրեթէ բոլոր գյուղատնտեսական գոտիներում և տարածքներում: Մենք ունենք բոլոր պայմանները խաղողի և պտուղների արտադրության պատշաճ որակն ու քանակն ապահովելու, ինչը հնարավորություն կտա ոչ միայն բավարարել սեփական սպառումը, այլ նաև արտահանումը:

Սակայն ավելի քան երկու տասնամյակ է ինչ Հայաստանի Հանրապետությունում, չնայած վերջի տարիների զարգացմանը, պտղաբուծությունը ապրում է լուրջ ճգնաժամ և ետզարգացում:

Պտղատու մշակաբույսերի արտադրական նշանակության այգիների տածքներն ու բերքատվությունը /Ըստ ՀԽՍՀ-ի և ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության/՝

Պտղատու տնկարկների տարածքները և բերքը /Ըստ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները և համախառն բերքը 2007թ./

80-ականների կեսերին ըստ ԽԱՀՄ պաշտոնական վիճակագրական տվյալների Հայաստանի Հանրապետության տարածքում 54 հազար հեկտարի վրա մշակվում էին պտղատու այգիներ: Պտղի բերքի ծավալների արտադրությունը հասել էր 280 հազար, /որոշ տարիներին նույնիսկ 320 հազար/ տոննայի :

Ըստ ՀՀ Պետվիճվարչության տվյալների ներկայումս՝ 2007թ. բոլոր պտղատեսակների տնկարկների տարածքը կազմում է 38 հազար հեկտար: Պտղի բերքի արտադրության ծավալները 2007թ-ին հասել է 260 հազար տոննայի և պտղի ինքնաբավության մակարդակը վերջին տարիներին /Աղյուսակ 4/ մոտենում է 100%-ի:

<u>Պտուղների սպառման ինքնաբավության մակարդակը ՀՀ-ում (տոկոս) /Ըստ ՀՀ Գյուղատնտեսության Նախարարության/</u>

Հետևաբար, ըստ պաշտոնական տվյալների մենք վերականգնել ենք խորհրդային տարիների արտադրության ծավալները, իսկ մեկ շնչի հաշվով' զգալիորեն գերազանցել ենք այն, հատկապես եթե հաշվի առնենք, որ բնակչությունը իրապես /անկախ մշտական կան ժամանակավոր բացակայողների կարգավիճակին անդրադառնալու/ որոշակի պակասել է: Այդ ցուցանիշը նախկինում հասնում էր 115 կգ/մարդ պտուղ և 90 կգ/մարդ խաղող տարեկան, ինչը նշանակում էր, որ մեզանում մրգերի սպառումը ըստ պահանջի էր' համաշխարհային բարձր մակարդակի հասնող: Սակայն ներկայումս մեր սեղաններին արդյոք՞ տեսնում ենք այդ մրգային առատությունը: Ընդհակառակը' մեր բնակչության մի ստվար զանգվածի համար մրգերի սպառումը հասել է նվազագույնի: Մեզանում, ինչպես և ամենուր մրգերի սպառման ձևը հիմնականում մեծ ծավալի թարմ սպառումն է և մի փոքր մասի վերամշակումը: Բայց հարց է առաջանում, ինչու՞ տեղական վերամշակողներից շատերը մեր պտուղներով հագեցած շուկայում ընդհանրապես հումք չեն մթերում: Կարծում ենք հարցի պատասխանը բացատրվում ոչ միայն տեղական մրգերի թանկությամբ, այլև նրանց պակասորդով: Դրույթը հաստատող ևս մեկ նոր փաստ' մեր հանրապետությունը, քնելով պտղաբուծական երկիր, հասել է նրան, որ սկսել է բավականին^մեծ ծավալներով ներմուծել թարմ խնձոր, տանձ, դեղձ, սալոր և հատապտուղներ:

Կորիզավորների, հատկապես դեղձի եւ ծիրանի առումով մշակության մեր ծավալները փոքր չեն և այգետարածքներն աճում են: Աշխարհում, նաև մեզանում, .ինչպես և մյուսների, այս մրգերի սպառման միտումը նույնն է. մեծ ծավալի թարմ սպառում և առավելապես հյութերի տեսքով վերամշակում: Սակայն մեր պարագայում խնդիրը նրանում է կայանում, որ տեղի վերամշակողներից շատերը գերադասում են դրսից խտացուկներ ներկրել և սպառողին հրամցնել իբրև բնական հյութ: Մեր դիտարկումներով այդ ոլորտի արտադրողների մեծամասնությունը ընդհանրապես տեղական հումք չի մթերում:

Մեր դիտարկումներով ծիրանենին, դեղձենին, խնձորենին, կեռասենին և որոշ հատապտուղները դեռ լայնորոն բայց ոչ մեծ տարածքների վրա մշակվում Հայաստանում, սակայն սալորենու, սերկևիլենու և հատկապես տանձենու /տեղական սորտերին արագ չորացնող նոր հիվանդության պատճառով/ մշակության տարածքներն ու արտադրության ծավալները վերջին տարիներին խիստ նվազել են և հասել են նվազագույնի: Միայն խաղողի, դեղձենու և ծիրանենու այգետարածքները փոքր չեն և, բարեբախտաբար, աճման միտում ունեն:

Մեր կարծիքով պտղատու այգետարածքների ու բերքի պաշտոնական տվյալները ճշտման և ստուգման կարիք ունեն: Հայտնի է, որ իրավիճակը շատ անմխիթար էր 90-ականների վերջերին՝ այգիների արտադրական այգետարածքները նվազել, հասել էին 24-25 հազար հա : Դա ակներև էր նույնիսկ ճանապարհորդելու ընթացքում առավել զարգացած գոտում' Արարատյան հարթավայրի տարածքում նախկինի հետ համեմատելիս: Պտղատու և խաղողի համատարած բազմահազար այգիների տեղը դատարկություն էր, տեսանելի էին միայն փոքրիկ այգիների կղզիակները”: Ներկայումս էլ ցայտուն դրական տարբերություններ չեն նկատվում: Հավելենք, որ պտղատու այգիների զգալի տարածքները լիարժեք չեն, այսինքն այգիներում շատ են բացակա ծառերը և վերջնարդյունքում դա բավականին մեծ տոկոս է կազմում: Աա նշանակում է, որ պտղաբերող ծառերի քանակը պակաս է արձանագրված այգու հեկտարի իրական ներուժից: Երբեմն էլ այգու 40%-ի կամ շուրջ կեսի վրա ծառ կամ վազ չի աճում: Հասկանալի էր, որ նման իրավիճակի արդյունքներն էլ ճշգրիտ չեն կարող լինել:

Այգեգործական տարածքների մեծ մասն էլ ծերացած, կիսաքայքայված վիճակում են և բացարձակապես չեն մշակվում: Ցավոք, սեփականատերերը հաճախ

չգիտեն ինչպես ճիշտ խնամել այգին կամ էլ պարզապես ափսոսում են ջրել ու պարատացնել ծառերը, համարելով, որ ի հակառակ բանջարային բույսերի, ծառերը միևնույն է դիմացկուն են և շուտ չեն չորանա:

Պարզ է, որ այգիների այս վիճակով ու խնամքի այսպիսի մոտեցումներով հնարավոր չէ ակնկալել բարձր բերքատվություն: Այդպիսի այգիների արդյունքն իրոք չի գերազանցում անտառային ծառերից ստացվող բերքը, հաճախ նաև նրանց որակը:

<u>Պտուղների արտադրական բերքատվության մակարդակը ՀՀ-ում (տոկոս)</u>